

էին եւ ատակ դիւթելու սուրբ հմայքով մօտաւորներն եւ հեռաւորները :

Յիշատակութեան արժանի է Մելքիսեդեկ կաթողիկոսի շահախնդիր խորհուրդը, Միւռնորհնէքն Մովսէս վարդապետին կատարել տալ, համոզուած թէ անոր ծիսակատարութիւնը իր վեհաշուք եւ հոգեպարար ներկայացմամբ հանդիսատեսներու մեծ բազմութիւն պիտի ձգէ դէպի Էջմիածին եւ ասով պատկառելի դումար մը պիտի դոյանայ ի նպաստ հայրապետական դանձարանին : Եւ իրօք ալ Միւռնորհնէքի հանդէսն այնքան դոհ ձգեց հանդիսականները, որ անոնք սքանչանքով խօսեցան նաեւ հեռուները օրուան տպաւորութեանց մասին :

Դարձեալ ի Ֆահրապատ երբ ջրօրհնեաց հանդէսը կատարեց Մովսէս Շահ Աբասի ներկայութեան, ինչպէս կը գրէ Դաւրիթեցի (234) «ընդ գեղեցիկ յարմարումն զարդուցն եւ ընդ կարգաւորարար շարժումն եւ ի կանդնելն պաշտօնէիցն՝ յոյժ հաճեալ եւ հաւանեալ էր արքայ եւ խանդաղատեալ ի վերայ Մովսէսի» :

23. ՊՕՂՈՍ Վ. ՄՈՎԱՅԻ

Ներսէս Մոկացի, Առաքել Դաւրիթեցի եւ Գրիգոր Դարանաղցի միարան իբրեւ նախընթաց կարապետ մտաւոր զարթնումի նոր շարժման ցոյց կու տան Պօղոս վարդապետը :

Սա ծննդեամբ Մոկաց աշխարհի Բար դիւղէն էր, աշակերտած Զագ մականուանեալ Կարապետ վարդապետին : Վարդապետական